

հաւատն աղանդութեանն արիանոսաց, եւ դարձցին անդրէն երթալով յիւրաքանչիւր վիճակս, եւ շրջեսցեն զիւրաքանչիւր ժողովորդս յարիանոսաց հաւատն: 87 Իսկ իբրեւ ոչ ոք ի նոցանէն այսմիկ յանձն առնուլ հաւանեցան, ապա աքսորեաց զնոսա, եւ ընգեց յաշխարհս աստարս, զի մի՛ ոք ի նոցանէն դարձցի յիւր տեղիս: 82 Եւ փոխանակ նոցա՝ զանաւրէնութեան հովիւսն կացուցանէր, յամենայն քաղաքս արիանոսս չեպիսկոպոսս յղէր. եւ եղև մեծ շարժումն եւ խռովութիւն եւ հերձուածք յամենայն եկեղեցիս տիեզերաց:

83 Եւ մեծ եղև ընդ ամենայն տիեզերք փորձութիւնք նեղութեանց վտանգի քան զառաջին թագաւորացն. եւս չար որ ի հեթանոսացն պատերազմն եւ խռովութիւնքն յառաջագոյն յառնէր առ այլովք դիցապաշտ մեհենասէր թագաւորաւք: 84 Ամենայն ճշմարիտ ուղղափառհաւատք վարդապետք մերժեցան յիւրաքանչիւր ժողովորդոց, եւ զնոցա տեղիսն կալան մշակք սատանայի. եւ ամենայն հաւատացելոց ի Քրիստոս հասանէին բազում նեղութիւնք, եւ առ հասարակ ամենայն ժողովորդոցն լինէր սուգ եւ տրտմութիւնք: 85 Չի կալան զեկեղեցիսն ամենայն պաշտանեայքն սատանայի, եւ հեռացան հովիւքն յիւրաքանչիւր հաւտից, եւ եղեն խաշինք ցրուեալք. զի ոչ գոյր նոցա առաջնորդ, եւ ոչ մնաց տեղի աղաւթից հաւատացելոց ժողովորդոց: 86 Այլ զի մի՛ հրեշտակացն սատանայի հաւանեսցին, նոքա ի բացատ յանյարկ տեղիս՝ արտաքս եւ քաղաքաց եւ շինաց ասէին կալ յաղաւթս. եւ ի կատարել զաղաւթսն իւրեանց՝ ինդրէին ուխտիւք յԱստուծոյ, զի փոխեսցէ զանցուցէ զչար ժամանակն, եւ դարձուցէ զճշմարիտ իւրաքանչիւր վերակացուս յիւրաքանչիւր ժողովորդսն. եւ յիւրեանց վաստակս ի շինեալ եկեղեցիսն՝ ուստի մերժեցանն, թերեւս դարձ լիցի նոցա այսրէն:

87 Իսկ յայն յիշխանաց՝ որ ընդ սրբոյն Ներսէսի երթեալ էին յերկրէն Յայոց, զնոսա բազում զանձիւք լցեալ արձակէր, կաշառակուրծս կաշառաւէկս առնէր առ հասարակ՝ որ միայն անդ էին. եւ բազում զանձս ոսկւոյ եւ արծաթոյ, եւ ականց պատուականաց ի ձեռն նոցա՝ արքային առաքէր, իբրեւ այնու կամէր հաճել զմիտս թագաւորին: 88 Չի ոչ գոյր չափ եւ ոչ թիւ, զի անհամար զանձս առաքէր արքային Յայոց. գրէր առ նա զիր ամբաստանութեան զսրբոյն Ներսիսէ, իբրեւ թէ սպան զորդի նորա: 89 Եւ արձակեաց եւս զպանդանդսն զԱրշակունիսն թագաւորին Յայոց, որ կային եւս ի կայսերական պաղատանն. զի են նոքա եղբաւրորդիք արքային Արշակայ, զի միումն անունն ճանաչէր Գնել, եւ միւսումն անունն Տիրիթ, ետ ի ձեռս սատրապացն Յայոց, եւ զնոսա զայս արինակ անդուստ յուղարկէր: